

1893 թ.): Սպենսերի համաձայն, իւրաքանչիւր անհատ ազատութիւնը կը վայելէ, այնքանով, որ չխանգարէ այլոց ազատութիւնը:

#### 4. ԳՈՅՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

19-րդ դարու իւրայատուկ աստուածաբան-փիլիսոփաներէն կը նկատուի՝ դանիացի **Ս. Կիրկեգոր** (Søren Kierkegaard, 1813 – 1855 թ.), որ հիմնադիրն է *գոյութեան փիլիսոփայութեան* (գերմ.՝ Existenzphilosophie, ֆրսս. եւ անգլ.՝ Existentialism):

Այստեղ, պէտք է զանազանել՝ *գոյութիւն* (անգլ.՝ Being, Existence, գերմ.՝ Dasein, Existenz) եւ *էութիւն* (անգլ.՝ Essence, գերմ.՝ Wesen) եզրերը: Մինչ *գոյութիւնը* «կեցողիւն» կամ «ներկայ ըլլալ» կը նշանակէ, *էութիւնը* բանի մը «ինչպէս ըլլալ»-ու մասին կ'արտայայտուի: Գոյութեան փիլիսոփայութիւնը կը շեշտէ նախ եւ առաջ մարդու գոյութիւնը (ներկայութիւնն ու կեցողիւնը) ապա կ'արտայայտուի անոր էութեան («ինչպէս ըլլալուն», օրինակ՝ կենսականութեան ու բանականութեան) մասին:

**Ս. Կիրկեգորի** գլխաւոր հարցադրումը հետեւեալն է, թէ՛ «*ես, որպէս գոյութիւն ունեցող անհատ, ինչպէ՞ս կրնամ յարաբերութեան մէջ մտնել Աստուծոյ հետ*»: Այս հարցադրման պատշաճ պատասխան տալու համար, հարկ է նախ պարզել, թէ՛ «*ես, ինչպէ՞ս կարող եմ ի՛մ գոյութիւնը ըմբռնել*» եւ անոր պատասխանը, Կիրկեգորի համաձայն, որ նախ եւ առաջ անհատը (իր «ես»ը), գիտակցօրէն ընդունելով իր գոյութեան իրողութիւնը, ինքն իր գոյին հետ յարաբերութեան մէջ մտնելու է: Հակառակ պարագային, եթէ անհատը («ես»ը) չյաջողի իր գոյին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել, կ'իյնայ *յուսահատութեան* գիրկը: Այս գաղափարը նկարագրուած է 1849 թուականին հրատարակուած Ս. Կիրկեգորի «*Հիւանդութիւնը մինչէ մահ*» (դան. բնագիր՝ „Sygdommen til Døden“, անգլ.՝ „The Sickness unto Death“, գերմ.՝ „Die Krankheit zum Tode“) երկին մէջ, ուր յիշեալ «հիւանդութիւն»ը, նոյնիսկ *յուսահատութիւնն* է:

Ս. Կիրկեգորի գլուխ գործոցը կը նկատուի իր, 1843 թուականին հրատարակուած «*Կամ – Կամ*» երկը (դան. բնագիր՝ „Enten – Eller“, անգլ.՝ „Either – Or“, գերմ.՝ „Entweder – Oder“), ուր Կիրկեգոր կը նկարագրէ մարդու գոյութեան հետեւեալ երեք հանգրուանները կամ փուլերը.-

**ա) Գեղագիտական փուլ**, երբ մարդու անձնականութիւնը տակաւին չէ կազմուած եւ մարդ կ'ապրի կեանքը վայելելու շրջան մը, ինչպէս օրինակ՝ Դոն ժուանի կերպարը, որ արտաքին երեւոյթներէ կախեալ կեանք մը կը վարէ: Այս հանգրուանը յուսահատական է եւ պատճառ կը հանդիսանայ՝ յաջորդ փուլին:

**բ) Բարոյագիտական փուլ**, երբ մարդ ազատելով արտաքին երեւոյթներէն, բացարձակապէս ինքզինք (իր անձը) կ'ընտրէ եւ որպէս բարոյագէտ կը զանազանէ «բարին ու չարը», ինչպէս օրինակ՝ Սոկրատեսի կերպարը: